ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___»«_____» 2026թ. **N-------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 724-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի «Երևան քաղաքում փողոց վերանվանելու մասին» N 724-Ն որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի.

1) Նորքի փողոցի 1-ին նրբանցքն (սկսվում է Նորքի փողոցի հ.151 և հ.153 հասցեների հարակից տարածքից և Նորքի գերեզմանատան մոտով հասնում մինչև Գյուրջյան փողոցի սկզբնամաս) անվանափոխել հայ ճարտարագետ և գյուտարար Հովհաննես Ադամյանի անվամբ՝ **«Հովհաննես Ադամյան փողոց»,**

2) Սերո Խանզադյան փողոցի հ.65 և հ.56 տնատիրություններից մինչև հ.152 և հ.175/4 տնատիրություններ տանող ճանապարհահատվածն անվանակոչել **Նորքի փողոց,**

3) Նորքի փողոցի 2-րդ նրբանցքն (սկսվում է Նորքի փողոցի հ.122 հասցեի հարակից տարածքից, Գ.Հովսեփյան փողոցը հատելով և շրջանաձև պտտվելով հասնում հ.9 հասցեի հարակից տարածք) անվանափոխել **Նորքի փողոց, 1-ին նրբանցք,**

4) Հովհաննես Ադամյան փողոցի հ.01-009-0105-0041 կադաստրային ծածկագրով գույքից սկսվող և հ.01-009-0001-0061 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 1-ին նրբանցք,**

5) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող և հ.01-009-1084-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհ հասնող հատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 2-րդ նրբանցք,**

6) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող և հ.01-009-0064-0011 կադաստրային ծածկագրով գույք հասնող ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 1-ին փակուղի,**

7) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող հ.01-009-1097-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 2-րդ փակուղի,**

8) Հովհաննես Ադամյան փողոցից սկսվող հ.01-009-1086-0001 կադաստրային ծածկագրով ճանապարհահատվածն անվանակոչել **Հովհաննես Ադամյան փողոց, 3-րդ փակուղի:»:**

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 724-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետի համաձայն՝ գույքերին հասցեներ տրամադրելու նպատակով Կադաստրի կոմիտե ուղարկվող համապատասխան հայտերը մերժվում են՝ պատճառաբանությամբ, որ ճանապարհահատվածները, որոնց կից գտնվում են գույքերն անհրաժեշտ է անվանակոչել և անվանակոչելուց հետո նոր անդրադառնալ հասցեավորման հարցին:

Ճարտարագետ-գյուտարար Հովհաննես Ադամյանը ծնվել է 1879 թվականի փետրվարի 5-ին, Բաքվում՝ խոշոր նավթարդյունաբերողի ընտանիքում:

Դեռ աշակերտական նստարանից Հովհաննեսի մեջ նկատելի էր պրպտելու և ուսումնասիրելու ձգտումը: Ուսանելով Մյունխենի, Ցյուրիխի և Բեռլինի համալսարաններում՝ նա մասնագիտացել է տեխնիկական գիտությունների բնագավառում:

Որոշ ժամանակ անց Ադամյանը մեկնել է Փարիզ և դասախոսություններ լսել Սորբոնի համալսարանում: Ուսումնառությունից հետո նա սկսել է զբաղվել պատկերները հեռավորության վրա հաղորդելու խնդրով և սերտ կապեր է հաստատել եվրոպական մի շարք երկրների գիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունների և նշանավոր գիտնականների հետ:

Գերմանիայում Ադամյանը սեփական միջոցներով ստեղծել էր լաբորատորիա և կատարել մի շարք գյուտեր (1908 թվականին առաջին անգամ հիմնավորել էր էլեկտրականության միջոցով պատկերի հաղորդման ու վերարտադրման հնարավորությունը, իրագործել գունավոր պատկերը հաղորդալարերով 600 կմ հեռավորության վրա հաղորդելու առաջին փորձը): 1913 թվականի վերջերին Ադամյանը տեղափոխվել է Ռուսաստան և մշտական բնակություն հաստատել Պետրոգրադ (Սանկտ Պետերբուգ) մինչև 1932 թվականը: Այստեղ նույնպես սեփական միջոցներով ստեղծել է լաբորատորիա և շարունակել գիտափորձերը: Այս ժամանակահատվածում նա ստացել է 21 արտոնագիր, որոնցից երկուսը՝ հեռուստատեսության բնագավառում: 1918 թվականին նա ստեղծել է Ռուսաստանում առաջին սարքը, որը ցուցադրում էր սև և սպիտակ անշարժ պատկերներ, ինչը մեծ քայլ էր հեռուստատեսության զարգացման բնագավառում:

Հովհաննես Ադամյանը գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության գյուտարարն է. 1925 թ. Երևանի համալսարանում ստեղծված հատուկ լաբորատորիայում Ադամյանը պատրաստել և գործողության մեջ ցուցադրել է «Հեռատես» եռագույն

պատկերման սարքը: Համանման համակարգ արտասահմանում ներկայացվել է միայն 1928 թվականին՝ Մեծ Բրիտանիայում Ջոն Բեյրդի կողմից:

1945-1951 թվականներին ԱՄՆ-ի Կոլումբիա (CBS) ռադիոընկերությունը Նյու Յորքում կատարել է փորձնական ցուցադրում, իսկ 1951-1953 թվականներին Ադամյանի համակարգն ընդունվել է որպես կայուն գործող համակարգ և օգտագործվել գունավոր պատկերներ ցուցադրելու համար:

Ադամյանն օժտված էր արտակարգ ընդունակություններով և տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների: Տեխնիկական գիտություններին զուգընթաց նա ուսումնասիրում էր նաև գեղանկարչություն և ճարտարապետություն, սիրում էր երաժշտություն:

Հովհաննես Ադամյանը մահացել է 1932 թվականի սեպտեմբերի 12-ին, Լենինգրադում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N 724-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ